ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/8724-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-996-13.01.2025-ՏՏԳՇ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Անհրաժեշտ է Նախագծի դրույթների համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերին:

2. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետում վրիպակը շտկելու նպատակով առաջարկում ենք «1-ին մասի 1-ին կետում» բառերը հանել:

3. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին հաջորդում է կրկին 7-րդ կետ: Վրիպակը շտկելու նպատակով առաջարկում ենք ուղղել կետերի համարակալման հաջորդականությունը:

4. Նախագծի 9-րդ հոդվածի վերնագիրն անհրաժեշտ է հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված դրույթը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:

Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերի պահանջները և Նախագծի 6-րդ հոդվածում համարակալման փոփոխությունը՝ առաջարկվում է Նախագծի 9-րդ հոդվածի «1. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 8-րդ մասի» բառերը փոխարինել «Սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի» բառերով:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ